

ՉԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՆՈՐԱՎԵՊԵՐԸ

Բանալի բառեր- Չապել Եսայան, ժանրային համակարգ, Նորավել, արևմտահայ գրականություն, պատկերային համակարգ, հոգեբանական գրականություն

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին արևմտահայ գրականության մեջ աննախադեպ կերպով զարգացավ Նորավելի ժանրը, ինչը ժամանակաշրջանի մշակութային, ինչպես նաև հասարակական-քաղաքական փոփոխությունների արդյունքն էր: Հեղինակները մամուլին էին հանձնում ստեղծագործություններ, որոնք պատկերում էին մարդկային առօրյան, կենցաղը, առաջին հայացքից հաճախ անկարևոր թվացող թեմաներ, որոնք սակայն ունեին հոգեբանական խորք, իսկ երբեմն էլ նաև թաքնված գաղափարախոսություն: Այսպիսով, դարավերջի գրականությունը մոտենում էր առավելապես մարդուն և մարդկայինին, և իրական կյանքը դառնում էր գրականություն: Սա, բնականաբար, 80-ականներին ձևավորվող ռեալիստական շարժման արդյունքն էր, որի առաջամարտիկը Արփիարյանն էր: Գրական ասպարեզում փայլում էին Չոհրապի, Արփիարյանի, Բաշայանի, Երուխանի, Չիֆթե-Սարաֆի Նորավելները. «Կամսարականը ուսումնասիրում է մարդկային ներաշխարհը, Չոհրապը վերլուծում է այն, Բաշայանը՝ քանդակում, Երուխանը՝ քայքայում»¹:

1900-ականների սկզբներին Նորավելագրության մեջ իր խոսքն ասաց նաև Չապել Եսայանը, ինչին հայ գրականագիտությունը դարձյալ աններելի անտարբերությամբ և շարունակական լռությամբ է մոտենում ավելի քան մեկ դար: Ճիշտ է, Եսայանի Նորավելներին անդրադարձել են Գ. Հակոբյանը, Ս. Արզումանյանը², սակայն բոլոր աշխատանքներում

¹ Կոստանյան Ա., Նորավելի ժանրը 90-ական թվականների արևմտահայ գրականության մեջ, ՀՍՍՐ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր, թիվ 3, 1963թ., էջ 41:

² Տե՛ս Հակոբյան Գ., Արևմտահայ Նորավելը, Երևան, 1996թ. և Արզումանյան Ս., Չապել Եսայան. Կյանքը և գործը, Երևան, 1965թ.:

Էլ կարծես նորավեպերը քննվում են իրենց գիտապատմական արժեքով, և գեղարվեստական կողմը լիարժեքորեն կարևորված չէ:

Արևմտահայ երևելի գրագիտուհին, ունենալով գեղեցիկի բացառիկ ընկալում, հոգեբանորեն համոզիչ կերպարներ պատկերելու ձիրք, և, իհարկե, եվրոպական բարձրաճաշակ գրականության փայլուն իմացություն, սեղմ ծավալով աչքի ընկնող ստեղծագործությունները կառուցեց սրընթաց սյուժեների հիման վրա, դրանց ընծայեց հոգեբանական վեպերին բնորոշ խորք և համեմեց իր առինքնող լեզվամտածողությամբ, որի արդյունքում ստեղծված նորավեպերն իրենց կատարելությամբ վստահաբար մրցության կարող են գնալ 20-րդ դարի կամ եվրոպական գրականության նորավեպերի ընտիր նմուշների հետ:

Գրականության տեսությունը փաստում է նորավեպին բնորոշ մի քանի գծեր, որոնցով այս ժանրը տարբերվում է մնացած ժանրերից, այդ թվում նաև պատմվածքից, դրանք հիմնականում սրընթաց դիպաշարն ու անսպասելի ավարտն են, սակայն այս գծերը սոսկ արտաքին հատկանիշներ են, որոնք ոչ բոլոր դեպքերում կարող են ստեղծագործություններին տալ գեղարվեստական շուք: Ուսումնասիրելով նորավեպերի տարբեր նմուշներ՝ այն համոզմանն ենք գալիս, որ տվյալ ժանրը վերը նշված հատկանիշների հետ մեկտեղ, առավել ազդեցիկ է դառնում իր այսպես ասած *թաքնված գաղափարախոսությամբ*, հաճախ չգրվող, բայց տողատակում հասկացվող իմաստով, ինչը ընթերցողին ստիպում է հեղինակի ասելիքի մասին պատկերացում կազմել պարզապես վերջին տառը կարդալուց և անգամ վերընթերցելուց հետո: Մի կարևոր հանգամանք էլ կա. Եսայանն այն քիչ հեղինակներից է, որ ինքն է հենց նորավեպերի վերնագրերի կողքին գրել դրանց ժանրը՝ այդպիսով ընթերցողի ուշադրությունը հրավիրելով դրանց և վերջիններիս արտաքնապես շատ նման այլ փոքրածավալ ստեղծագործությունների տարբերության վրա:

Խոսելով արևմտահայ նորավիպագրության և կին հեղինակների մասին՝ անհնարին է չիշատակել արևմտահայ գրականության առաջին նորավեպի՝ «Գարնան մի ասուկ»-ի (1883 թ.) հեղինակի՝ Թագուհի Շիշմանյանին (օրիորդ Մեհկի) անունը: Նորավեպ տերմինը, ճիշտ է, մեզանում առաջին

անգամ օգտագործել է Մ. Թաղիադյանը Վ.Սքոթի առիթով³, սակայն չենք սխալվի, եթե ասենք, որ նշված պարագայում եզրույթը չէր կարող ընկալվել իր հիմնական իմաստով՝ թե՛ ձևի, թե՛ բովանդակության անկատարության պատճառով: Ասել, թե Թագուհի Շիշմանյանի «Գարնան մի ասուկ»-ն ուներ նորավեպին բնորոշ բոլոր հատկանիշները, իհարկե, սխալ և ծայրահեղ կլինի, սակայն անկարելի է չգնահատել ստեղծագործության բերած թարմությունը, որը ինչ-որ չափով ուղենշային եղավ արևմտահայ գրականության համար: Թ. Շիշմանյանը ձևով անկատար, որոշ պակասություններ ունեցող երկում կատարեց հոգեբանական նրբին դիտարկումներ, պատկերեց կին-տղամարդ հարաբերությունների բազմաշերտ էությունը, օբյեկտիվ իրականությունը⁴՝ դրանով մի քանի քայլ առաջ անցնելով իր ժամանակակից կին հեղինակներից, որոնք ընթերցողին ներկայացնում էին հիմնականում հեքիաթապատում, առեղծվածներով պաճուճված պատմություններ:

Ինչպես արևմտահայ կին հեղինակների հետ կատարվող զանազան համեմատություններում, այս դեպքում էլ շահեկանորեն տարբերվում է Չապել Եսայանը. Նրա նորավեպերում կենտրոնական հերոսը գրեթե միշտ կինն է, թեման՝ մարդկային փոխհարաբերությունները, կովմիանացիան՝ անհատի գործողությունները՝ հասարակական տրամադրությունների հոսքին հակառակ, այստեղ չկան հաղթողներ կամ պարտվողներ, յուրաքանչյուր պայմանական հաղթանակի կամ պարտության ներքո թաքնված է մարդկային առկախված ճակատագիր: Նորավեպերի յուրահատկությունն այն է, որ մեր կողմից թվարկված գրեթե բոլոր երևույթները միևնույն նորավեպում հանդես են գալիս միասնաբար, սակայն յուրաքանչյուր ստեղծագործության մեջ արտահայտվում են յուրահատուկ կերպով, ուստի քննենք դրանք առանձին-առանձին: 1903 թվականին «Ծաղիկ» հանդեսում տպագրված «Հանցավոր կինը» նորավեպում հեղինակը պատկերում է անհատ-հասարակություն բախումը, անհատի կործանումը այդ հասարակության պատճառով՝ ցույց տալով կնոջ հոգեկան ներաշխարհի ավերման պատճառները: Ընթերցողին ա-

³ Տե՛ս «Արարատյան լրագիր», Կալկաթա, 1848թ., էջ 155:

⁴ Շիշմանյանի նորավեպի մասին հանգամանալից տե՛ս Ալ. Մակարյան, Թագուհի Շիշմանյան, Արևմտահայ գրականության կորուսյալ ասուկը, Վեմ համահայկական հանդես, 2010թ., N4:

ռաջին իսկ տողից կլանող Նորավեպի կառուցվածքը և շարադրանքը հարազատ են Եսայանական գրչին. խավարում լավող ճիչերը, ցավի և տառապանքի ձայները արդեն գուժում են ընթացող ողբերգության մասին, հնչում են ենթադրություններ, թե «մեկը մեռած ըլլալու է», սակայն կատարվող ողբերգությունն ավելի քան բազմաշերտ էր, և հեղինակը, տիրապետելով պատումի արվեստի բազմաձև հնարքներին, պարզապես խոսքը փոխանցում է նովելի գլխավոր հերոսուհին. «Հոգի՛ս, աղեկցիր, աչքդ բաց անգամ մը, մայրիկիդ նայե, ալ չպիտի ամչնամ քեզմէ, գավակս, մտիկ ըրէ՛, ձեռք ձեռքի պիտի անցնինք փողոցներէն. հիմա ամենքը գիտցան, որ իմ գավակն ես դուն»⁵: Կարծես մասամբ հայտնի է դառնում, թե որտեղ էր թաքնված ստեղծագործության վերնագրում մատնանշված հանցանքը: Արդեն կատարված ողբերգությունը պետք է կրկնապատկվեր հասարակության անբարենպաստ վերաբերմունքով, և որդեկորույս մոր հոգին պետք է շարունակեր ավերվել միայն Նրա համար, որ իր դրացիները միևս այդ պահը չէին իմացել, որ միայնակ կինը և մեռնող տղան մայր ու որդի են, չէին իմացել՝ որտեղից են Նրանք եկել և «ինչ ճակատագրական հրայրքի կամ արկածի գոհ» էին: Հեղինակի կողմից ակնարկվող բարոյական հագար ու մի պակասություններ ունեցող հասարակությունը, իր մեջ չի հանդուրժում հանցավոր կնոջ գոյությունը, սկսում է զգուշանալ իր երիտասարդների համար, արհամարհանքի և անտեսման է մատնում խեղճ կնոջը, ով էլ տղայի դին՝ «շրթունքը սեղմված կարծես վերջին բողոքի մը մեջ», հողին հանձնելուց որոշ ժամանակ անց հեռանում է քաղաքից՝ իրեն շրջապատող մարդկանց ազատելով իր «հանցավոր ներկայությունից»: Արևմտահայ գրականության մեջ, իհարկե, Նորություն չէր Եսայանի բերած սյուժեն կամ կերպարները, Նորությունը, ավելի ճիշտ՝ առանձնահատկությունը Եսայանի պատկերների ձևի և բովանդակության ներդաշնակության, հոգեբանական խորության և շքեղ լեզվի մեջ էր, որոնցով վստահաբար տարբերվում էր իր ժամանակակիցներից:

Եթե վերը ներկայացված Նորավեպում պատկերված կինը և Նրա տառապանքները, ինչպես ասացինք, Նոր երևույթներ չէին արևմտահայ գրականության մեջ, և կյանքում

⁵ «Ծաղիկ», թիվ 24, 12 հուլիս, 1903 թ, էջ 281:

հաճախ հանդիպող ողբերգությունը Եսայանը հրաշալիորեն դարձրել էր նորավեպի նյութ, ապա ընդամենը երկու շաբաթ անց լույս տեսած նորավեպի հերոսուհին իր կանացի հոգեկերտվածքով, փառքի տեղեանքի իր աներեր ընթացքով և բնատուր ձիրքով, որքան էլ բնական և համոզիչ կերպար էր, միևնույն է, արևմտահայ գրականության մեջ կարծես բերում էր կանացի նոր հոգեբանություն և հաղթական կերպար: Խոսքը «Մրցումը» նորավեպի հերոսուհու մասին է, ով նկարչուհի է, ունի տաղանդ և հաշտ ապրում էր իր նկարիչ ամուսնու հետ, վերջինս, սակայն, իր գործերը տառապանքով ստեղծող, միշտ իր կատարածից դժգոհ կերպար էր և իր աշխատասիրությամբ էր փորձում լրացնել ամեն պակասություն: Դրաման այստեղ ընթանում է ավելի շատ տղամարդու հոգեկան աշխարհում, չհասկացված և չգնահատված դառնալու կասկածը կարծես թե նյութեղենանում է՝ բախվելով իր կնոջ՝ իրականություն դառնող ծգտումներին. «Այդ օրեն այդ ու կին զգացած էին, թե իրենց մեջ արահետ մը փորված էր, այլևս իրենց մտերմական հարաբերությունները դադրած էին բոլորովին, և իրարու համար երկու մրցակից արվեստագետներու վերաբերումը ունեին միայն: Մեկը վիրավորված էր դեպի գեղեցկությունը տաժանագին ջանքերուն մեջ չհասկացված ըլլալուն և մյուսը հափրացած իրեն տաղանդին շռայլված գովասանքներեն»⁶: Այսպիսով, ամուսինների հարաբերությունները վերածվում են նույն գործունեությամբ զբաղվող կնոջ և տղամարդու մրցման: Եսայանն այստեղ ցույց է տալիս կնոջ և տղամարդու հոգեկերտվածքների տարբերությունը, դժվարություններին դիմակայելու տարբեր ուղիները: Կնոջ օրըստօրե ավելացող փառքը և դրանց կապակցությամբ իրեն տրվող շնորհավորանքները, հասարակության կողմից իր՝ նույնպես նկարիչ լինելու փաստի մոռացումը ամուսնուն ստիպում են հեռանալ քաղաքից: Իսկ որոշ ժամանակ անց լսվում է տղամարդու մահվան լուրը, ինչը համընկնում է կնոջ ցուցահանդեսի կապակցությամբ հեղվող գովասանքների հետ, իր արդեն մահացած ամուսնու մասին զանազան տեղեկություններ հայտնող նկարչուհին «մոռացավ հաղորդելու, թե անիկա արվեստագետ մըն էր»: Դրաման այսպիսով հասնում է իր բարձրակետին, Եսայանը չի փորձում հերթական ողբերգության մեջ փնտրել մեղավորների, որոնք, որպես այդպիսին, իսկապես չկան, պարզապես իր արվեստի հզոր

⁶ «Ճաղիկ», թիվ 26, 26 հուլիս, 1903 թ., էջ 306:

ուժով ցույց է տալիս այն տառապանքները, որ կարող է ունենալ չհասկացված մարդը, արվեստագետի՝ չգնահատված լինելու հետևանքները, ինչպես նաև կին-տղամարդ հակադրության հերթական մակարդակներից մեկը⁷:

Կանացի բնավորության և հոգեկերտվածքի մթին ակյունների ցուցադրմանն է միտված 2. Եսայանի «Սիրո վրեժը» նորավեպը: Դավաճանված կնոջ վրեժխնդրության տարբեր եղանակներ կան պատկերված գրականության մեջ, որոնցից մեկն էլ դավաճանությանը դավաճանությամբ պատասխանելն է: Եսայանն իր նորավեպում ցույց է տալիս, որ հնարավոր պատասխան դավաճանությունը ոչ միայն վրեժխնդրության, այլև սեփական ինքնագնահատականի բարձրացման, ներքին ուժի չափման միջոց է: Նորավեպում պատկերվող դավաճանված կինը իր կանացի հմայքներով սեր էր ներշնչել դիմացի տղամարդուն, ով ակամայից սիրային եռանկյան կողմ էր դարձել, իսկ հետո պարզապես կանացի սիրո վրեժը լուծելու միջոց: «Ես քեզի հետ եղա, որպեսզի վրեժս լուծեմ անկե, այո, անկե, որ ինձի անկարող կը կարծեր, այդպիսի քաջության մը, կը հասկանա՛ս, թե ինչու, պարզամիտ երիտասարդ, թե ինչու ժպտեցա քեզի, թե ինչու հետո՞ եկա, թե ինչու քուկդ եղա այսչափ օրերե ի վեր»⁸: Նորավեպում այս դեպքում պատկերվում են երկու տարբեր ողբերգություններ՝ դավաճանված կնոջ և խաբված տղամարդու, որոնցից յուրաքանչյուրն ապրում է իր ներքին դրաման, այն տարբերությամբ, որ կինն ունի հոգեկան բավարարվածության հասնելու իր եղանակը, իր ամուսինն անգամ չգիտի, որ կինն իրեն փորձում է դավաճանել, սակայն Եսայանը ավելի շատ միտված է ցույց տալու կանացի հոգեբանության առանձնահատկությունները, իր գործողություններով պատասխանելու ամուսնու այն պնդումներին, որ «երբեք քաջություն պիտի

⁷Ունի՞ արդյոք նորավեպը ինքնակենսագրական հետք. կա կարծիք, որ Եսայան ամուսինների հարաբերությունները միանշանակ չեն եղել, խոսվում է նրանց հնարավոր ամուսնալուծված լինելու մասին: 2. Եսայանի նամակագրությունն ուսումնասիրելիս ամուսինների միջև առկա խնդիրների մասին հիշատակումների չենք հանդիպել, ավելին՝ Եսայանը միշտ ջերմ խոսքերով և մեծ հարգանքով է դիմել ամուսնուն, սակայն փաստ է, որ նրանք երկար ժամանակ ապրել են միմյանցից հեռու, արվեստագետ ամուսիններից յուրաքանչյուրն ունեցել է իր հետաքրքրություններն ու զբաղմունքը, ուստի չենք բացառում, որ քննվող նորավեպը կարող է լինել նաև Եսայան ամուսինների հարաբերությունների գեղարվեստական արձագանքը:

⁸ «Ճաղիկ», թիվ 7, 7 փետրվար, 1904 թ., էջ 93:

չունենաւ դժգոհ ըլլալու, բողոքելու, տառապելու: Օրին մեկը, եթէ քեզի բոլորովին մոռնամ, լռին պիտի սպասես քու անկյունիդ մեջ, մինչև որ ուրիշ մը գա քեզի ամենելու»⁹: Հեղինակը տողատակում ցույց է տալիս, որ հերոսուհին իսկապես սիրում է իր ամուսնուն, չի համաձայնում իր ունեցած կապը շարունակել այլ տղամարդու հետ, սակայն դրա մասին չի գրում և ոչ մի բառ՝ համապատասխան դատողությունները թողնելով ընթերցողին:

Կանացի հույզերի, ֆիզիկական և հոգեկան մեծ ցավի մասին է «Ցավին հեշտանքը» նորավեպը: Եսայանն այստեղ ցույց է տալիս հիվանդ, մեռնող մարմնում ապրող առողջ հոգու տենչանքները: Ճանր ցավերի մեջ տառապող հերոսուհին իր կյանքի համար պայքարող բժշկի մեջ տեսնում է իր փրկությունը, հոգեկան բավարարումը: Հիվանդության բերած ցավը նաև հեշտանքի աղբյուր է դառնում: Արդյոք հասցրե՞լ էր սիրել իրեն փրկել փորձող բժշկին, կիևը բարձրաձայնում է դրա անհնարինության մասին, որովհետև. «հիվանդությունը գարշելի կընէ մեզի, այնքան համոզված էի, որ իմ վիրավոր մարմինս միայն նողկանք կամ գթություն պիտի ներշնէր իրեն...»¹⁰:

Նորավեպին բնորոշ ընթացք և հանգուցալուծում ունի նաև «Վարժապետը» համեմատաբար մեծածավալ ստեղծագործությունը, որը դարձյալ հասարակության կողմից չհասկացված և հալածված անհատի մասին է, ով ստիպված հրաժարվում է իրեն այդքան պետքական աշխատանքից, ենթարկվում հոգեկան տվայտանքների, անկարող է դառնում պայքարելու, անգամ զգում է մոտալուտ մահվան ներկայությունը, քանի որ «կյանքի պայքարի մեջ դասալիք, այլևս չես կրնար ապրիլ»¹¹:

Այսպիսով, Չապել Եսայանի բեղմնավոր գրիչը փայլեց նաև նորավեպի ժանրում, մարդկային ամենատարբեր ճակատագրերը դարձան գրական ստեղծագործության առատ աղբյուր, առօրյա-կենցաղային թվացող թեմաների մեջ երևելի գրագիտուհին կարողացավ տեսնել մարդկային դրաման, ցույց տվեց կնոջ Էության բազմաձև անկյունները, որոնք այնքան անհասանելի են շատերին, իր տաղանդի ուժով և

⁹ Նույն տեղում:

¹⁰ «Ճաղիկ», թիվ 27, 2 օգոստոսի 1903 թ., էջ 319:

¹¹ «Հայ գրականություն», Բ տարի, թիվ 1, 1/14 օգոստոս, 1912թ., էջ 29:

գրչի գործությամբ կարողացավ **Նկարչական ճշգրտությամբ** պատկերել մարդու հոգում կատարվող անցքերը՝ դրանով իր մնայուն տեղն ամրապնդելով հայ գրականության պատմության մեջ: Գրականագետ Ալ. Մակարյանը ճշմարտացիորեն հայտնաբերել է նաև, որ 2. Եսայանի գրականության մեջ «գեղարվեստական պատկերը նկարագրվում է կինոյի լեզվով»¹², իսկ այս փոքրածավալ ստեղծագործություններում ցանկանում ենք հատուկ ընդգծել Եսայանի ստեղծած պատկերների գեղագիտական բարձր արժեքը, որոնց շնորհիվ նորավեպերը դառնում են ավելի դինամիկ և պարզապես կլանում են ընթերցողին: Գեղարվեստի հանդեպ Եսայանի՝ դեռ մանկությունից ունեցած սիրո՞, եվրոպական, մասնավորապես ֆրանսիական գեղագիտական ձեռքբերումներին քաջածանոթ լինելո՞ւ, թե՞ պարզապես ժամանակակից հայտնի նկարիչ Տիգրան Եսայանի կինը լինելու հանգամանքն է 2. Եսայանի գրիչն օժտել նկարչական վրձնին հատուկ մոգականությամբ, գուցե նշված բոլոր փաստերը միասին, սակայն կասկածից վեր է, որ հայ գեղարվեստական գրականության ընտիր էջերից են այս նորավեպերը, ահա այդպիսի օրինակներից. «Մնոր ճակատը ծածկված մազերու խոպոպիկներեն կը տժգուներ հետզհետե, շնչառության դժվարությունը այնպես կուռեցներ կուրծքը, որ կողերը կցցվեին մորթին տակեն, անդամները ձգված երակներեն կապուտցած կը տնկվեին ու կարծես գերագույն ճգնաժամի մը մեջ ամբողջ մարմինը ճարճատելով պիտի քանդվեր» («Հանցավոր կինը»), «սքանչելի սև մազեր, ճերմակ ճակատին վրայեն հավասարապես բաժանվելով, կերթային ծոծրակին վրա հավաքվելու, իր ականջներուն վարդագույն բլթակներեն երկու ոսկիե օղակներ կկախվեին և մեջտեղ կհանեին դիմագծերուն հանդարտ ներդաշնակությունը» («Սիրո վրեժը»):

HAYK HOVHANNISYAN - ZAPEL YESAYAN'S NOVELS: The late 19th and early 20th century in Western Armenian literature is developing the novel genre, the result of which the Armenian novel arrives at the peak of its development. During this period Zapel Yesayan writes a number of wonderful novels, about which was not said none comprehensive word.

¹² **Մակարյան Ա.**, Հապել Եսայանի «Սիլիստրի պարտեզները», վերջաբան, Եր., 2018թ., էջ 167:

The article is about Zapel Yesayan's novels. Are analyzed in it characters, the plot, image system and is shown its high aesthetics.

Key words - Zapel Yesayan, genre system, novel, Western Armenian literature, image system, psychological literature.

ԱՅԿ ՕԳԱՆՆԻՍՅԱՆ - ՆՈՎԵԼԼՆԵՐ ԶԱՔԵԼԱ ԵՏԱՅԱՆ: В конце 19-го – начале 20-го века в западноармянский литературе развивается жанр новелла. На основании этого армянской новелл достигает пика своего развития. В это время Запел Есаян пишет ряд замечательных новелл о котором до сегодняшнего дня не было сказано исчерпывающее слово.

Статья о новеллах Запела Есаяна. В нем анализируются сюжет, герои, система изображений и показано высокий эстетический вкус Есаяна.

Ключевые слова – Запел Есаян, жанровая система, роман, западноармянская литература, система изображений, психологическая литература.

REFERENCES

1. A Kostanyan A., Noravepi zhanre 90-akan tvakanneri arevmtahay grakanutyanyan mej, HAAR gitutyunneri akademiayi texekagir, tiv 3, 1963 (in Armenian).
2. „Hay grakanutyun,, B tari, tiv 1, 1912 (in Armenian).
3. G. Hakobyan, „Arevmtahay noravepe,, Yer. 1996 (in Armenian).
4. S. Arzumanyan, Zapel Yesayan, Kyanqe ev gortsy, Yer., 1965 (in Armenian).
5. A. Makaryan, Zapel Yesayani „Silihtari parteznere,, , Yer., 2018 (in Armenian).
6. „Tsaghik,, shabatatert, tiv 24, 27, 1903, 1904 (in Armenian).